ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԴԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՑ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ
(պատմազգագրական ակնարկ)

Արևմտյան Հայաստանի գորգագործական մշակույթի մասին մեր պատկերացումները համեմատաբար մակերեսային ու կցկտուր են: Հայոց գորգագործական մշակույթի երբեմնի հանրահայտ կենտրոնների մասին չկան ազգագրական բավարար նյութեր, ու մանավանդ՝ առանձին ուսումնասիրություններ: Այս առումով որոշ չափով շահեկան է պատմական Ներքին Հայքի մի մասը կազմող **Դերսիմը,** ուր ԺԹ. դ. վերջին ու Ի. դ. սկզբներին տեղագրական ուսումնասիրություններ են կատարել Անդրանիկն ու Գևորգ Հալաջյանը: Դերսիմը ներառում է պատմական Բարձր Հայքի ու Ծոփքի Դարանաղի, Մնձուր, Մանանաղի, Դերջան, Հաշտյանք, Խորձյան, Պաղնատուն գավառները, որոնցից յուրաքանչյուրը եղել է առանձին նախարարություն ու բնակչության գերակշիռ մասն էլ կազմել էին հայերը[1]: Նիկողայոս Ադոնցի կարծիքով «**Դերսիմ**» անվանումը Դերջանի արաբա-պարսկական ձևն է[2]: Անդրանիկը գրաբաշրջանի կազմի մասին հայտնում է, որ այն բաղկացած է երկու մասից՝ դաշտային Չարսանջակից ու Դերջանից ու լեռնային՝ մինչ Ակնա սահմանները հասնող դրանց միջանկյալ գրաբաքներից[3]: Դերսիմի մասին այդ նույն նկարագիրն է մատնանշում նաև Գ. Հալաջյանը, շեշտելով որ այն ընդգրկում էր Չարսանջակի, Բոլոմորի, Խոզաթի, Չմշկածագի և Ակնա գավառները, ընդ որում այս վերջինիս կազմում նա նկատի ունի միայն Եփրատի աջ ափի գյուղերը[4]: Ամեն դեպքում, մենք սույն ուսումնասիրությունը շարադրելիս, նկատի ենք ունենալու Ակնից Բոլոմոր ու Կամախից Չմշկածագ և Բալու ձգվող գրաբաքները, որի կենտրոնական մասը պաշտոնական Թուրքիան 1936 թ. վերանվանել է Թունջելի:[5]

Տարածաշրջանի ժողովրդագրական նկարագրի մասին: Տարածաշրջանի գորգագործական մշակույթի ուսումնասիրման, մասնավորապես հայոց բնորոշ ավանդույթների բացահայտման հարցում առանցքային նշանակություն ունի այստեղ կատարված ժողովրդագրական գործընթացների ու դրանց հետևանքների մասին թեկուզ և ընդհանրացված պատկերացում կազմելը: Այս առումով քննության առարկա են տարաբնույթ քրդական ցե-

1 Տե՛ս **Թ.Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան,1984, էջ 94, 205-206, 217-218:

2 Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում (ռուսերենից թարգմ. Ա. Խոնդկարյան և Է. Խոնդկարյան), Երևան, 1987, էջ 71:

3 Տե՛ս **Անդրանիկ,** Տերսիմ, Ճանապարհորդութիւն եւ տեղագրութիւն, մասն 1, 2, Թիֆլիս, 1900, էջ 128:

4 Տե՛ս **Գ. Հալաջյան,** Դերսիմի հայերի ազգագրությունը. «Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», թ. 5, Երևան, 1973:

5 Այս մասին տե՛ս **Գ.Հալաջյան**, անդ, էջ 32:

ղերի ծագումնաբանական ու էթնիկական պատկանելության հետ կապված հարցերը: Մասնավորապես, դա վերաբերում է կրոնական արարողությունները թուրքերենով կատարող, թուրքական անուններ կրող, բայց առօրյա կյանքում քրդերեն կամ զազայերեն խոսող ալևի աշիրեթներին, որոնց հանդեպ աճող հետաքրքրությունը որոշակի անհանգստություն է պատճառում քրդական ու թուրքական շրջաններում: Թուրք քրդագետները փորձում են ապացուցել, որ քրդերենն ու զազայերենը իրականում թուրքական լեզուներ են, իսկ քուրդ քրդագետներն էլ ջանում են հաստատել դրանց իրանական ակունքներ ունենալու փաստը[6]: Կա տեսակետ, որ զազաները, որոնց անվանում են նաև դիմլի կամ դմլիկներ, միդիացիների հետնորդներն են[7]: Քուրդ մասնագետներից ոմանք Դերսիմի ու շրջակա գարաձաշրջանների քրդերի այդտեղ հայտնվելը փորձում են կապել մոնղոլներից հալածված Ջալալ ադ-Դինի հետ[8]:

Սակայն այս գարաձաշրջանը կարևորվում է որպես հայոց պատմամշակութային գործունեության առանցքային կենտրոններից մեկը: Այդտեղ էին գտնվում հայոց նախաքրիստոնեական հավատալիքների խոշորագույն սրբատեղիները՝ Արամազդի, Անահիտի, Միհրի, Վանատուրի գաճարները[9]: Նույնիսկ մեր ժամանակներում այդտեղ դեռևս պահպանվում են հայոց 107 եկեղեցի ու վանք[10]: Այստեղ աշխարհաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխություններն, ինչպես հայտնի է, սկսվել էին Հուստինիանոս 1-ինի իրականացրած վարչաքաղաքական ռեֆորմներից: Բայց չնայած դրան ու նաև հետագա ծայրահեղ աննպաստ քաղաքական իրադարձություններին, նախքան Մեծ եղեռնը Դերսիմի բնակչության հիմնական զանգվածը քրդերից հետո կազմում էին հայերը: Նիկողայոս Ադոնցը անդրադառնալով Դերսիմի պատմաշխարհագրական հարցերին ու ժողովրդագրությանը, ներկայացրել է Ի. դարի սկզբներին Դերսիմում հայերի թվաքանակի մասին որոշ տվյալներ, իր հաշվարկների համաձայն՝ շուրջ հարյուր հազար հայ, ըստ Լինչի՝ ութսունհինգ հազար[11]: Գևորգ Հալաջյանի հաշվարկներով այդտեղ ապրում էր 110386 հայ[12]: Սակայն հայոց ու հայկական մշակութային ավանդույթների ներկայության ուսումնասիրման առումով շատ կարևոր է Դերսիմի քրդերի ծագումնաբանության հարցի պարզաբանումը: Դերսիմի տեղական ծագում ունեցող քրդական ցեղերը տարբերակվում են դավանաբանական ու լեզվաբարբառային հատկանիշներով, որոնք շատ դեպքերում որոշակիորեն աղերսվում են հայոց պատմամշակութային համալիրների հետ: Այս առումով, մասնագետները նաև առանձին հետաքրքրություն են դրսևորել թուրքերի կողմից **«ղզլբաշ»**, իսկ հայերի

6 **Այշե Հյուր**, Դերսիմը, Հայկազը եւ Պեպրոսի պատմությունը, տե՛ս http://www.radikal.com.tr/ek_haber.php?ek=r2luhaberno=7452:

7 http://www.kavehfarrokh.com/news/professor-ba-litvinsky-helmets-of-partho-sassanian-iran-2/:

8 Անդ:

9 Տե՛ս **Ղեւոնդ Ալիշան**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երեւան, 2002, էջ 133,138, 147, 152, **Կ. Մելիք-Փաշայան**, Անահիտ ափրածուհու պաշտամունքը, Երեւան, 1963, էջ 108, **Վ. Հ. Բդոյան**, Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Երեւան, 1974, էջ 214-232, **Թ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 205-206, 217-218, **Վերա Սահակյան**, **http://nairiland.com/?tag:**

10 **Վերա Սահակյան**, **http://nairiland.com/?tag:** Դերսիմի հայոց եկեղեցիների եւ այլ կառույցների մասին տե՛ս **Գ. Հալաջյան**, էջ 19-30:

11 **Նիկողայոս Ադոնց**, Հայկական հարցի լուծման շուրջ, Երեւան, 1989, էջ 20 - 21, http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html (հետայսու՝ **Նիկողայոս Ադոնց** http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html):

12 Տե՛ս **Գ. Հալաջյան**, էջ 100:

կողմից «դուզիկ» անվանված, դավանանքով ու լեզվով առանձնահատուկ, մոտ հարյուր հազար բնակչություն ունեցող ազգության հանդեպ, որի ծագումնաբանությունը հիմնավոր բացատրություն դեռևս չի ստացել: Նիկողայոս Ադոնցը գտնում է, որ Դերսիմի հայերի կողմից զզլբաշներին տրված «դուզիկ» անվանումը նշանակում է աղանդավոր[13]: Իրականում էլ հայտնի է, որ Դերսիմն ու մանավանդ դրա արևմտյան տարածքները Ը-Թ. դարերում եղել են պավլիկյան աղանդավորական շարժման կենտրոններ՝ մասնավորապես Մանանաղի գավառը համարվում էր այդ շարժման բույնը[14]: Շարժման հիմնական զանգվածը կազմում էին հայերը, որոնց մի նշանակալից մասը դեռևս շարժման ընթացքում ու մանավանդ դրա ճնշվելուց հետո, չդիմանալով հունական ուղղափառ եկեղեցու և կայսրության հալածանքներին, դարձավ իսլամի հետևորդ: Աղանդավորների մի մասն էլ ընդունեց քրիստոնեության ուղղափառ տարբերակն, ու դրանց ժառանգորդ Ակնա գավառի հայերն էլ հետագայում հայտնի էին «**հոռոմ**» *կամ* «**քաղկեդոնական հայեր**» *անունով*[15]: Ադոնցն ավելացնում է նաև այն, որ խնդրո առարկա տարածաշրջանի հայոց մյուս մասն էլ քրիստոնյա մնալով հանդերձ, տեղի տվեց իսլամի ազդեցությանն ու յուրացրեց նրա տարրերից շատերը: Այս բոլոր զործընթացների արտահայտություններն էլ դիտարկվում են Դերսիմի մահմեդական քրդերի պատմամշակութային համալիրներում: Մասնավորապես՝ Դերսիմի իսլամ դավանող զզլբաշների մոտ արգելված էր երկրորդ կին ունենալու հնարավորությունը[16]: Նրանք երկրագործ են, զբաղվում են այգեգործությամբ, առևտրով ու իրենց բնավորությամբ խաղաղասեր են: Այս հանգամանքները հնարավորություն են տվել Ադոնցին եզրակացնելու, որ «**հիմք չկա այս կիսաքրիստոնեական ժողովրդին վերագրելու քրդական ծագում՝ շատ ավելի մեծ իրավունքով նրանք կարող են համարվել տարածաշրջանի բնիկ քրիստոնյա ազգաբնակչությանը պատկանողներ**»[17]: Այս առումով շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում ԺԶ-ԺԷ. դդ. քուրդ պատմագիր **Շարաֆ խան Բիթլիսին** (1543-1603): Ըստ պատմիչի՝ Դերսիմի քուրդ աշիրեթները, որոնց նա տարբերակել է «Զմշկեզեք» (իմա՛ Զմշկածագ) անվանումով, իրենց «սովորույթներով ու պահվածքով հարիր չէին մուսուլմաններին և որ նրանց միջավայրում իսլամը որպես այդպիսին չէր դավանվում»[18]: Դատելով նրա ներկայացրած ու մյուս այլ աղբյուրների վկայություններից, Դերսիմի քրդերի հավատալիքների համակարգում չեն եղել իսլամին վերաբերող հատկանիշներ: Ուստի հետևելով Ն. Ադոնցի եզրահանգումներին, կարելի է զզլբաշներին ու զազաներին համարել իսլամացած պավլիկյան հայերի հետնորդներ, որոնք պահպանել են այն ամենը, ինչն առնչվում է հայոց ավանդական մշակութային համալիրներին: Այդ երևույթը կար նաև Դերսիմին մերձակա գավառների քրդերի կենցաղում՝ օրինակ Բալուի քրդերի երգն ու երաժշտական արվեստն ուսումնասիրած Ալևորը (**Հարություն քահանա Սարգսյան**)

---

13 **Նիկողայոս Ադոնց**, անդ:

14 Այս մասին տես նաև **Ե. Գ. Տեր - Մինասյան**, Միջնադարյան աղանդների զարգացման և ծագման պատմությունից, Երևան, 1968, էջ 1121, **Ա. Հովհաննիսյան**, Դիվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 362-363:

15 Տես **Նիկողայոս Ադոնց**, http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html:

16 **Հակոբ Մնձուրի**, Երկեր, Երևան, 1986, էջ 346 (հետայսու՝ Հակոբ Մնձուրի):

17 Տես **Նիկողայոս Ադոնց**, http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html:

18 **Տե՛ս անդ:**

ուղղակի համարել է «**քրդահայ երաժշտություն**»[19]: Ծագումնաբանական այսքան անառարկելի աղերսներով էլ պետք է բացատրել հայերի հանդեպ Դերսիմի տեղական ծագում ունեցող քրդերի այն աննախադեպ ջերմ վերաբերմունքը, որը նկատել են ուսումնասիրողները: 1880-ական թվականներին Էրզրումում Ռուսաստանի հյուպատոս Ց. Մալոման, ներկայացնելով Դերսիմի հայերին, նաև շեշտել է, որ «ի զարմանս շատ ճանապարհորդների եւ ուսումնասիրողների Դերսիմի քրդերը նրանց հետ չափազանց բարեկամական հարաբերությունների մեջ էին»[20]: Հայտնի ճանապարհորդ Լինչն իր հերթին դա բացատրել է նրանով, որ «քրիստոնյաների հետ Դերսիմի քրդերին սերտորեն կապել է թուրքերի հանդեպ եղած ընդհանուր թշնամանքը եւ քրիստոնեության հանդեպ եղած հարգանքը[21]: Կարինում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գրենարի դիտարկումների համաձայն էլ «հնարավոր գտնելով շփումը քրիստոնյաների հետ ու նրանց վերաբերվելով հատուկ ընդգծվածությամբ, Դերսիմի ղզլբաշները չնչին շփումն իսկ մահմեդականության հետ համարում էին որպես մեծ մեղսագործություն ու պղծվածություն»[22]: Դերսիմի հայերի պատմամշակութային համալիրների ուսումնասիրման առումով, վերը տրված ժողովրդագրական գործընթացներին զուգահեռ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև տարածաշրջան կատարված ու տարածաշրջանից կատարված տարբեր էթնիկական միավորումների ներհոսքն ու արտահոսքը: Մասնավորապես՝ Շարաֆ խանի տեղեկություններից պարզվում է, որ Դերսիմի «**Զմշկեզեք**» կոչված երբեմնի հզոր աշիրեթը հետագայում տրոհվել է ու նրա որոշ ճյուղեր ընդհանրապես լքել են տարածաշրջանն ու հաստատվել Արարատյան Դաշտավայրում, Շիրվանում, Լուբիստանում (հյուսիսարեւմտյան Իրան)[23]: Այսինքն, մենք պետք է նկատի ունենանք, որ այդ ճանապարհով Դերսիմի պատմամշակութային համալիրները տարածվել էին այլ տարածաշրջաններում: Դրան զուգահեռ տեղի են ունեցել նաև դերսիմահայերի արտագաղթեր: Գարեգին Սրվանձտյանցը Ակնա գավառի բնակավայրերի բնութագրման առնչությամբ հիշատակում է «Ակնա գյուղերից շատերու փոխադրվիլը Նիկոմեդիա կողմերը՝ ուր հաստատվելով՝ իրենց թողած գեղերու անունները իրենց բնակած նոր տեղերուն վրա դրեր են, որպիսիք են Միջագյուղ կամ Օրթագեղ, Բախչաճիկ կամ Պարտիզակ եւ այլն, եւ միեւնույն անունները կան ու կմնան հիներու վրա»[24]: Մյուս կողմից Դերսիմի լեռնային ու դժվարամատչելի միջավայրը համեմատաբար անվտանգ պատսպարան էին անընդհատ կոտորածների ու բռնագաղթումների առջեւ կանգնած հայ զանգվածների համար: Այդտեղ հաճախակի հոսքեր են կատարվել Տարոնից ու Բարձր Հայքից, Վասպուրականից, մանավանդ Խարբերդի հարթավայրային մասերի հայկական բնակավայրերից[25]:

Համբարձում Գասպարյանն իր ունեցած տեղեկությունների հիման վրա գրում է. «Զմշկա-

---

19 Տե՛ս **Ալեւոր** (Հարութիւն քահանա Սարգիսեան), Բալու, Գահիրե, 1932, էջ 293:

20 **Я. Д. Малома,** Описание Эрзерумского вилайета, СПб., 1874. ñ. 5, 19. տե՛ս **Джалиле Джалил, Курды Дерсима 50-70 гг XIX в.,** http://www.kurdist.ru/index.php?option=com_contentltask=viewlid=183:

21 **Х. Ф. Б. Линч,** "Армения", ò. I, Тифлис, 1910, p. 538. տե՛ս **Джалиле Джалил, անդ:**

22 "Некоторые сведения о турецких курдах-кызылбашах" (Из путевых заметок французского вице-консула в г. Эрзеруме г-на Гренара, составил П. И. Аверьянов) // Изв. штаба Кавказского военного округа, **№ 19,** ñ. **47.** տե՛ս **Джалиле Джалил, անդ:**

23 "Курдские историографы о курдских племенах"- /www.pukmedia.com/russi/index.php?option:

24 **Գ. Սրվանձտյանց**, Երկեր, հ. 2., էջ 352, տե՛ս նաեւ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 58:

25 http://www.firatnews.com/index.php?rupel:

ձագի եւ շրջանի բնակիչներուն մէկ մասը եկեր է Անիէն եւ Նախիջեւանի կողմերէն, փախած կամ բռնագաղթած 1578-1590 թ. ու դրան նախորդած թրքական արշաւանքների ժամանակ եւ յետոյ, իսկ Ս. Թորոսի գիւղախմբի բնակիչները հոն գաղթել են հաւանաբար Սիւնիքէն, 1730-ական թականներուն»[26]:

Վերոհիշյալներով հանդերձ, Դերսիմի ժողովրդագրական ժամանակակից նկարագրի ձեւավորման հարցում առանցքային դեր է խաղացել Օսմանյան Թուրքիայի վարած ներքին քաղաքականությունը, որի հիմնական նպատակը հայահոծ գավառներում մահմեդականներ բնակեցնելն ու դրանով իսկ՝ հայոց ռազմական ներուժի կողմից սպասվող վտանգը նվազեցնելն էր: Դրան են եղել ուղղված նաեւ պարբերաբար իրականացված դավանափոխման գործընթացները, որոնց գագաթնակետը դարձան Մեծ եղեռնի իրադարձությունները: Այս բոլոր գործընթացներն, անշուշտ, իրենց ազդեցությունը պետք է թողած լինեին Դերսիմի գորգագործական մշակույթում եւ պետք է որ արտահայտվեին որոշակի դրսեւորումներով: Անտարակույս, հենց այդ հանգամանքը բարդացնում է ինչպես հայոց, այնպես էլ այդտեղ բնակվող մյուս էթնիկական հանրույթներին բնորոշ մշակութային համալիրների բացահայտումը:

Հայոց մշակութային ավանդույթների ներկայության մասին վկայությունների մի խումբն էլ կազմում են իսլամ ընդունած կամ քրդացած հայերի հարյուրավոր բնակավայրերը: ԺԹ. դարի վերջին ու Ի. դարի սկզբներին իրականացված տեղագրական դիտարկումները մատնանշում են ոչ միայն պահպանված հայկական եկեղեցիների ավերակներն ու հնագույն գերեզմանները, այլ նաեւ այդ վայրերում բնակված քրդերի կենցաղում եւ հավատալիքներում պահպանված հայոց բնորոշ ավանդական սովորույթներն ու ծեսերը[27]: Ուշագրավ են նաեւ քրդական տասնյակ ցեղերի կողմից հայոց երբեմնի սրբատեղիներում պաշտամունքային արարողությունների իրականացման ու մանավանդ՝ այդ սրբատեղիները թուրքերից պաշտպանելու մասին եղած բազմաթիվ փաստերը[28]: Անկասկած, դրանք պատահական երեւույթներ չեն, դրանք դավանափոխման հետեւանքներ են ու ներկայացնում են քրդական այդ ցեղերի գիտակցության մեջ պահպանված նախկին ազգային հատկանիշները: Դերսիմի հայերի դավանափոխման ծավալների մասին սպառիչ պատկերացում է տալիս Գ. Հալաջյանի կողմից 1910-ական թթ. Դերսիմի 384 գյուղերի վերաբերյալ ներկայացրած պատմամշակութային ու ժողովրդագրական համառոտ նկարագիրը: Ըստ այդմ՝ դրանցից 37-ը հայաբնակ էին, 210-ը՝ քրդաբնակ, 137 -ը հայ եւ քուրդ խառն բնակչությամբ: Սակայն կարեւոր է այն պարագան, որ այդ բոլոր բնակավայրերում պահպանվել էին հայոց եկեղեցիներ կամ դրանց ավերակներ, խաչքարեր ու պատմական այլ հուշարձաններ, իսկ քրդերի գիտակցության մեջ էլ դեռեւս պահպանվել էր հայկական արմատներ ունենալու ավանդույթը[29]:

Դերսիմի հայերի ինքնության բացահայտման հարցերով զբաղվող դերսիմցի Միհրան Գյուլթեկիի դիտարկումների համաձայն ժամանակակից Դերսիմի բնակչության մոտ 75%

---

26 **Համբարձում Գասպարեան**, Զմշկածաղ եւ իր գիւղերը, Բոստոն, 1969, էջ 64:

27 Տեմ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 38, 45- 46, 67, 69 - 70, **Ն. Գասպարյան**, Դերսիմ (պատմաազգագրական ակնարկ). ՊԲՀ,1979, թ. 2, էջ 196, 198 եւ այլն (հետայսու՝ **Ն. Համբարձումյան**, Դերսիմ ...):

28 Տեմ http://www.firatnews.com/index.php?rupel:

29 Տեմ **Գ. Հալաջյան**, էջ 31-100:

կազմում են ծագումով հայերը, որոնք թեեւ իսլամացած են ու առօրյա կյանքում բնականաբար թաքցնում են իրենց հայ լինելը, սակայն դրանն ու իրենց ներքին հարաբերություններում պահպանում են հայկական ավանդույթները[30]: Անկասկած, դա բազմադարյա ժողովրդագրական գործընթացների արդյունքն է եւ վկայում է Գյուլթեկինից ավելի վաղ ժամանակներին վերաբերող դիտարկումները: Մասնավորապես, Դերսիմի կենտրոնական մասում գտնվող Խոթ ու Տուժիկ գավառներում ապրած քրդական ցեղերի մասին 1890-ական թվականներին նույն նկարագիրն էր տվել Անդրանիկը: Նա տեղի կուրեյշիտ քուրդ ցեղի հոգեւոր առաջնորդի մոտ տեսել էր հայերեն ձեռագրեր՝ այդ թվում նաեւ ավետարան ու այդ ամենի եւ իր ընդհանուր դիտարկումների արդյունքում նկատել է, որ «տերսիմցիներուն եթէ ոչ բոլորը, գէթ մեծ մասն այն համոզմունքին են, որ իրենց նախահայրերը հայեր են: Դա ապացուցներով պնդում են հենց քուրդ հոգեւոր առաջնորդները՝ սէիդները»[31]: Անշուշտ, հիմնականում դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ Դերսիմի քրդական մի քանի ցեղեր՝ մասնավորապես Հայդարանցիք, Մամըզոնցիք, Տեր Օվանցիք, Ապասանցիք, Կուրեյշանցիք եւ ուրիշները, որոնց նիստուկացին մոտիկից ծանոթ եղած ուսումնասիրողները համարում են «քրդացած բայց կես հայ քրիստոնյա մնացած» ցեղեր՝ մինչեւ վերջ բարեկամ մնացին հայերին ու պաշտպանեցին նրանց սրբատեղիները[32]: Անդրանիկն իր հերթին հաղորդում է, որ դրանք «կիսանկախ, մոտ 100 հազար ղզլբաշ քրդեր են, որոնք բաժանված են 18 ցեղերի ու դրանց թվում են նաեւ Միրաքցիք, Մամըզցիք եւ այլն»[33]: Այս 18 ցեղերի մասին հաղորդում է նաեւ Հակոբ Մնձուրին՝ շեշտելով դրանց բոլորի զազայախոս լինելու հանգամանքը[34]: Նա նաեւ պատմում է Մնձուր լեռնագագաթի շրջակայքում ապրած Բախտիարի քրդական աշիրեթի հայոց հանդեպ ունեցած որոշ բարեհաճության մասին, որոնք Ակնա ու Դուրուչայի հայկական գյուղերի թալանի ու կոտորածների ալիքների ընթացքում բավարարվել են հայկական մի քանի գյուղերից ստացված տարատեսակ ընծաներով ու դրա փոխարեն նրանց պաշտպանել ջարդարարներից[35]:

Սակայն Դերսիմի ժողովրդագրության ու խնդրո առարկա հարցերի առումով հատկապես կարեւոր են արդեն հիշատակված Միրաքյան ու Մամըզան քրդացած հայերի ծագումնաբանությանը վերաբերող տեղեկությունները, որոնք հաղորդում են Անդրանիկն ու Գեւորգ Հալաջյանը:

Ըստ Անդրանիկի՝ Միրաքյանների հիմնական բնակավայրերն են Տեր Օվան, Զոխուրը, Էքըզը, Հավլորին, Թորուտը կամ Հավլորու Սուրբ Կարապետի վանքը[36]: Ըստ Համբարձում Գասպարյանի՝ մինչ ԺԹ. դարի վերջը Միրաքյան հայ իշխանական տոհմի սեփականությունն էին Դերսիմի Հալվոր, Պառվագրակ ու Միրագ գյուղերը[37]: Այլ տեղեկություններով Միրաքյանների գյուղերի թվում էին Քերդեսուրը, Ակունքը, Խոզնգեղը, Հերդիֆը, Սիլբուսը, Զորբերանը, Իգձորը, Մայրավանը, Կարմիր բերդը, Հաղաջուրը, Հայդարանը, Խնձորիկը եւ այլն[38]:

---

30 Տե՛ս http://www.panorama.am/en/politics/2011/02/07/m-gyulteqi/:

31 **Անդրանիկ**, նշվ. աշխ., էջ 161-162:

32 Տե՛ս **Գ. Երեւանեան**, Պատմութիւն Զարսանջակի հայոց, Բէյրութ, 1956, էջ 65 (հետայսու՝ **Գ. Երեւանեան**):

33 **Անդրանիկ**, նշվ. աշխ., էջ 156:

34 Տե՛ս **Հակոբ Մնձուրի**, էջ 494:

35 Տե՛ս **Հակոբ Մնձուրի**, էջ 253- 254, այս՝ **Պախթիարան** աշիրեթի հակաթուրքական ուղղվածությունը նկատել է նաեւ Գ. Հալաջյանը՝ տե՛ս նշվ. աշխ. , էջ 87:

36 Տե՛ս **Անդրանիկ**, էջ 177:

37 Տե՛ս **Հ. Գասպարյան**, Դերսիմ, էջ 198:

38 Տե՛ս http://www.dnforum.am/showthread.php:

Նկ. 1 Գորգապատկեր Կապադովկիայի շինությունների որմնանկարներից, 8-9-րդ դ.

Նկ. 2 Խուրջինի երես՝ շեղանկյունագարդով, 20-րդ դ. սկ.

Նկ. 3 Գորգ, շեղանկյունագարդով, «Բագգրևանդ», 19-րդ դ. վերջ

Նկ.4 Գորգ, շեղանկյունագարդով, դարբերակ, Դերսիմ-Մարաշ

Նկ. 5 Գորգ, մեկ ընդհանուր շրջանակով, Դերսիմ, 19-րդ դ. վերջ

Նկ. 6.Գորգ, բազմանիստով՝ «Տավուշ , Դերսիմ, 19-րդ դ. վերջ

Նկ.7 Գորգ/հատված/, «Մեմլինգ , Դերսիմ- Փոքր Հայք 18-րդ դ. վերջ

Նկ. 8 Գորգ «Կավակ , Դերսիմ-ՓոքրՀայք, 19-րդ դ. վերջ

Նկ. 9 Գորգ/հատված/, «Վահան , Դերսիմ-Վանանդ,19-րդ դ. վերջ

Գ. Հալաջյանն իր հերթին հիշատակել է, որ Միրագյան տոհմի սեփականությունն էր Հալվոր, Դառվագրակ ու Միրագ գյուղերն իրենց շրջակայքով, միրաքյան հայերը բնակվում էին Դերսիմի տասնյակ այլ գյուղերում՝ Խնձորեկում, Բարդիում, Հաղաջուրում, Ակունքում եւ այլն, իսկ բացի այդ՝ նաեւ Կարնո, Բաբերդի, Երզնկայի, Խարբերդի, Տիգրանակերտի, Մալաթիայի գավառներում[39]: Ի դեպ, Հալաջյանը որպես ականատես, դերսիմցի հայերի մի մասի քրդանալու առումով հիշատակում է 1604-1606 թվականներին Դերսիմի Կարմիր վանքում արտագրված Կարմիր ավետարանը, որում գրված է նաեւ խնդրո առարկա դեպքերի պատմությունը[40]: Միրաքյանների կենտրոնատեղին համարվել է Հալվորի գյուղը, որը մեր ժամանակների գրականության մեջ հիշատակվում է Հալվորի վանք անունով: Հայտնի է, որ այս վանքի քահանայությունը ժառանգաբար պատկանում էր Միրաքյաններին: Այս վանքը մեծ ճանաչում ու հարգանք ուներ հայերի ու զազաների շրջանում, ընդ որում, հատկանշական էր այն, որ զազա սեիդներն ու շեյխերը քահանայի ներկայությամբ, առանց նրանից արտոնություն ստանալու իրավունք չունեին նստելու[41]: Միրաքյաները իրենց համարում էին Մամիկոնյան տան շառավիղներ: Դերսիմի ու մերձակա տարածաշրջանների քրդական բազմաթիվ ցեղեր իրենց ծագումնաբանությունը կապել են Մամիկոնյան նախարարական տան հետ ու իրենց համարել են այդ տոհմի շառավիղներ[42]: Միրաքյանների մասին հիշատակվում են նաեւ ժամանակակից քրդական ու թուրքական հրատարակություններում, ուր մասնավորապես շեշտվում է 1920-ականներից սկսված քրդական ազատագրական պայքարում նրանց մասնակցությունը, հայկական տեղանունների, հայոց սրբավայրերի նկատմամբ քրդերի պաշտամունքի պահպանվելն ու մանավանդ՝ Դերսիմում Միրաքյան իշխանական տոհմի գոյությունը: Քուրդ պատմաբան Նուրի Դերսիմին Դերսիմին նվիրված իր ուսումնասիրություններում այդ տոհմը հիշատակում է «**Միրոսան**» անունով: Ինտերնետային կայքերից մեկում այդ առնչությամբ շեշտված է, որ դրանք հենց միրաքյաններն են, որոնց զազայերեն կոչում են «Միրոսան»՝ այսինքն միրոյենք, միրաքյանենք, որոնք իրենց թվական կազմով ու զինական ուժով դասվել էին Դերսիմի առավել հզոր ցեղախմբերի շարքը[43]: Նուրին գտնում է, որ այս տոհմը Մամիկոնյան նախարարական տան շառավիղներից մեկն է, իսկ «Միրաքյան» անվանման առաջացումը բացատրում է նրանով, որ դրանց նահապետ Տեր-Օվանը քրդական ցեղերի շրջանում հայտնի է եղել որպես իշխան՝ միր կամ միրո, ուստի եւ տոհմն անվանակոչվել է Միրոենք, որն էլ հետագայում ստացել է Միրաք ու Միրաքյան տեսքը: Նա իր դիտարկումների ընթացքում պարզել է, որ Միրաքյանները զբաղվել են հիմնականում անասնապահությամբ, իսկ միրաքցի կանայք զբաղվել են տնային տնտեսությամբ, այդ թվում գործել են գորգեր ու կարպետներ[44]: Նուրի Դերսիմին տեղեկացնում է եւս մի կարեւոր հանգամանքի մասին՝ Դերսիմի քրդերի մոտ ընդունված չի եղել այլ ցեղերից հարս տանելը, բացառություն էին միայն հայերը:

Մամիկոնյանների շառավիղներ են իրենց համարում նաեւ Մամրզան, Մամաքանլի,

---

39 Տե՛ս **Գ.Հալաջյան,** նշվ. աշխ., էջ 52, 53, 54, 352-353: http://www.turkotek.com/misc_00053/blindness.htm:

40 Տե՛ս **Գ.Հալաջյան,** նշվ. աշխ., էջ 68:

41 Տե՛ս http://www.dnforum.am/showthread.php:

42 Տե՛ս **Վահագն Գարագաշեան** http://akunq.net/am/?p=9644 /:

43 Տե՛ս http://www.dnforum.am/showthread.php:

44 Տե՛ս http://www.dnforum.am/showthread.php: Միրաքյաններին «միրո» անվանելու մասին տե՛ս նաեւ Տաճկահայաստանի ազգաբնակչությունները, «Մուրճ», 1895. **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 62:

Մամբքիե, Մամբքոն քուրդ ու ղզլբաշ ցեղերը, որոնք բնակվում են ոչ միայն Դերսիմում[45]: Մամաքանլի ցեղախումբը բնակվում է Մուշում[46]: Անգլիացի ճանապարհորդ ու դիվանագետ, հայտնի Մարկ Սայքսը անդրադառնալով քրդական մի շարք ցեղերի հայկական ծագմանը, նույնպես նկատի է ունեցել Մամիկոնյանների: Նա այդպիսիների թվին է դասել Բյուրակնի լեռների Մամաքանլի ու Վանա լճի հյուսիսային ափերին բնակված Մամական ցեղերը եւ այլն[47]: Այս տեսակետներն առաջին հերթին հիմնավորվում են հենց այդ աշիրեթների կենցաղում պահպանված ավանդույթներով: Ընդսմին, բացի այդ, հայտնի է, նաեւ որ արաբական հետապնդումներից խուսափելու նպատակով Մամիկոնյան նահարարական տան ճյուղերն անցել են լեռնային անմատչելի շրջաններ, այդ թվում նաեւ Դերսիմ[48]: Այս անչությամբ ուշագրավ է հայ ազգային-ազատագրական շարժման հետ կապված վաղ շրջանի գուշակություններից կամ տեսիլքներից մեկը, որում հայոց պետականության վերականգնումը կապվում էր Մամիկոնյան սպարապետական տան հետ, իսկ պետականությունը կորցրած ու ամբողջությամբ ավերված Հայաստանում որպես վերապրող տարածքներ, մատնանշվում էին միայն **Մանանաղիի ձորը**, Սասնոյ լեռներն ու Էլի մի քանի վայրեր[49]:

Ամփոփելով Դերսիմի ժողովրդագրությանը վերաբերող այս համառոտ ակնարկը, մեր համար անտարակույս է, որ Դերսիմի հայ ու քուրդ բնակչության մշակութային համալիրներում բացահայտորեն գերակա էին հայոց ավանդույթներն ու նաեւ այն, որ Դերսիմի քրդերի տեղաբնիկ ցեղերի ծագումնաբանության հարցը պետք է կապել տարածաշրջանի հայոց պարբերաբար տեղի ունեցած քրդացման գործընթացների հետ: Փաստորեն տարածաշրջանը եղել է հայոց ու հայ մշակույթի մի կարեւորագույն պահոց, ուր ըստ էության պահպանվել են ուսումնասիրման ու մեկնաբանման կարոտ հայոց ավանդական մշակութային համալիրների վաղ տարբերակներ:

Ուսումնասիրվող խնդրին վերաբերող աղբյուրների ու գրականության մասին: Դերսիմի ժողովրդագրության այս բարդ նկարագիրը առավելագույնս դժվարացնում է տարածաշրջանի էթնիկական հանրույթների պատմամշակութային ժառանգության բացահայտումը: Բացի այդ, Դերսիմի հայերի պատմազգագրական նկարագրի վերաբերյալ, ինչպես ասվեց, քիչ են մեր ունեցած տեղեկություններն ու առավել սակավ՝ այն ներկայացնող պատմամշակութային արժեքները: Սակայն, դրա հետ միասին, պետք է նկատի ունենանք, որ որեւէ էթնիկ հանրույթի այս կամ այն հատվածի դավանափոխ լինելը կամ լեզուն կորցնելն ու մոլեռանդ հակահայ կեցվածք ստանալը բոլորովին չեն նշանակում նաեւ մշակութային ավանդական համալիրների կորստյան մատնում[50]: Վերը շարադրվածը մեզ հնարավո-

45 Տես **Վահագն Գարագաշեան** http://akunq.net/am/?p=9644 /:

46 Տես http://www.kavehfarrokh.com/news/professor-b-a-litvinsky-helmets-of-partho-sassanian-iran-2/:

47 Տես **Վահագն Գարագաշեան** http://akunq.net/am/?p=9644 /:

48 Այդ տարածքներում Մամիկոնյանների առկայության մասին տես **Է.Դանիելյան**, Տարոնի եւ Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները (11-12-րդ դդ). ՊԲՀ, 1979, թ. 2, էջ 142:

49 **Ա. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երեւան, 1957, էջ 34:

50 Հայոց պատմամշակութային ժառանգության այս առանձնահատուկ դրսեւորմանը մենք առաջին անգամը չէ, որ առաջնային նշանակություն ենք տալիս. սա դիտարկել ենք նաեւ Այսրկովկասի հյուսիսարեւելյան գորգագործական կենտրոնների ուսումնասիրման ընթացքում, տես **Ա. Պողոսյան**, Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ. ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 241-244, նույնի՝ **«Ջրաբերդ»** խմբի գորգերի ծագումնաբանական ու տիպաբանման հարցերի մասին. «Էջմիածին», ԺԲ, 2011:

բություն է ընձեռում Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի ընդհանուր պատմության բացահայտման ասպարեզում որպես սկզբնաղբյուր օգտագործել նաև տեղի քրդերի կամ որ ավելի ճիշտ է՝ քրդացած հայերի գորգագործական ավանդույթներին վերաբերող նյութերը, որոնք թեև նույնպես շատ չեն, սակայն թույլ են տալիս խնդրո առարկա հարցերին տալ որոշ բացատրություն:

Ասվածն անշուշտ չի նշանակում թե մենք չենք ընդունում գորգագործությամբ քուրդ ցեղերի զբաղվելու փաստը, ուղղակի մեզ հայտնի են քրդական գորգագործական կենտրոններին բնորոշ տեխնոլոգիաները, գույներն ու հորինվածքների մատուցման առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս մեզ քրդական համարվողներից առանձնացնել հայոց կողմից ստեղծված գորգերը:

Դերսիմի հայերի մասին առավել մանրամասն տեղեկություններ հաղորդող Անդրանիկն ու Գեորգ Հալաջյանը շահեկան նյութեր են գրի առել նաև գորգագործության վերաբերյալ: Դրանք հումքի մշակման, գորգ գործելու, գորգերի ու կարպետների գործածման առանձնահատկությունների, դրանց առետրատնտեսական նշանակության եւ այլ ոլորտների մասին են: Գեորգ Հալաջյանը, որն իր դիտարկումները իրականացրել է 1908 -1914 թվականներին, ընդհանրապես մանրամասնորեն նշումներ է կատարել տվյալ բնակավայրի էթնիկական կազմի ու քանակի մասին, ներկայացրել նրանց նիստուկացի համառոտ նկարագիրն ու մանավանդ՝ տվյալ բնակավայրում առավել զարգացած արհեստի ու զբաղմունքի տեսակը: Պարզվում է, որ Դերսիմում գորգագործական մշակույթը հավասարապես զարգացած էր ինչպես հայերի, այնպես էլ քրդերի մոտ: Դերսիմի գորգագործական մշակույթի մասին չափազանց արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև վերն արդեն հիշատակված Հակոբ Մնձուրիի ստեղծագործությունները: Նկատի ունենալով հեղինակի տեղացի լինելու հանգամանքը, դրանցում եղած մեզ հետաքրքրող թեմային վերաբերող նկարագրությունները ընդունում ենք որպես տեղագրական փաստացի նյութ:

Որպես առարկայական աղբյուրներ՝ տարածաշրջանին վերաբերող գորգեր, օգտագործել ենք արտերկրի ուսումնասիրողների կողմից հրապարակված, ինչպես նաև ինտերնետային կայքերում տեղ գտած «Կենտրոնական անատոլիական» ու «Քրդական» տարբերակված գորգերի ու կարպետների որոշ նմուշները: Այս առումով էլ առանձնապես շատ չեն նյութերը, քանի որ պաշտոնական Թուրքիան ընդհանրապես արգելքի տակ էր պահում տարածաշրջանի մասին որեւէ տեղեկատվության իրականացումը:

Գորգագործության տեխնիկան ու տեխնոլոգիան Դերսիմում: Այստեղ ընդունված գորգագործական տորքի նկարագիրը ներկայացրել է Հալաջյանը: Ըստ այդմ՝ Դերսիմում «գորգերի, ճեճիմների, կարպետների եւ ծաղկուն բարձերի հենքը արվում էր ուղղակի դազգահների վրա, որոնց լայնությունը 0.50 մետրից 3.60 մետրի էր հասնում: Մեծ դազգահները անշարժ էին, կաղնի փայտից պատրաստված հաստ ցցերը՝ խորն ամրացված հողի մեջ, հողից դուրս մնացած 0.50-ից մինչեւ մեկ մետր բարձրություն ունեցող ցցամասում փորվածքներ կային, ուր դնում էին հենքի ձողը, որ չսահեր, իսկ հետեւի մասի ձողերը ավելի ցածր էին՝ 0.30-050 մ: Գործողները բացառաբար կանայք էին, մեծ գորգերի կամ կարպետների հենքի վրա միաժամանակ աշխատում էին չորսից-հինգ գործող, առանց մեկը մյուսին խանգարելու: Հանգույցները կապում էին կեռ գործիքի ու դանակի միջոցով, իսկ հանգուցա-

շարերը միջնաթելերն անցկացնելուց հետո հարթեցնում ու նստեցնում էին կտուտիչով»[51]: Այս նկարագրից ակնհայտ է դառնում, որ այստեղ էլ գործածական էին հայոց բնորոշ գորգագործական ուղղահայաց՝ պատին հենվող տորքն ու գորգ ու կարպետ գործելուն անհրաժեշտ մյուս հարմարանքները: Սա մի կարևոր հանգամանք է, մանավանդ, որ ըստ Մնձուրիի դիտարկումների՝[52] Դերսիմի քրդերը նույնպես օգտագործում էին ուղղահայաց տորք, ի տարբերություն հորիզոնական տորքի, որը գործածական էր պարսիկների, ինչպես նաև քրդական մի քանի ցեղերի միջավայրում:

Գորգն ու կարպետը դերսիմցիների կենցաղում: Տարածաշրջանում գորգագործական մշակույթի զարգացած լինելու մասին առաջին հերթին վկայում են դերսիմահայերի կենցաղին ու բնակարանի ներքին հարդարանքին վերաբերող տեղեկությունները: Դերսիմին մերձակա **Ղուրուչայ** գավառում (Ակնա ու Կամախի միջև ընկած տարածքի ուշ անվանումը) ծնված գյուղագիր Հակոբ Մնձուրին տարբեր առիթներով ներկայացրել է Արմտանի՝ (Դերսիմի հյուսիսարևմտյան մաս) ու այդ գավառի բազմաթիվ գյուղերի հայ, քուրդ ու զազաշ ժողովուրդների կենցաղավարման հետ կապված տարատեսակ մանրամասներ, հաճախ դրանք համեմատության մեջ դնելով կենտրոնական Դերսիմի քրդական ցեղերի համապատասխան դրսևորումներին, որոնք հնարավորություն են տալիս մեզ եզրակացնելու, որ հայոց բնակարաններում որպես ներքին հարդարանքի միջոց, հյուրընկալման պարագա, ծածկոց ու փռոց լայնորեն օգտագործվել են գորգեր, կարպետներ ու այլ գործվածքներ: Ակնա **Ապուչեխ** գյուղի տներից մեկի ներքնատեսքը նկարագրելիս նա գրում է, որ «Ակին շատ տուներուն պես լուսավետ էր ու պատերուն երկարությունովը գորգերով, կարպետով տոշկված էր»:[53] Արմտան գյուղի տներից մեկի ներքնատեսքի նկարագրից՝ «ամառ ըլլալով՝ գորգերը վերցուցեր էին...», մատնանշվում է, որ ձմեռները բնակարանի հատակը ծածկում էին գորգերով[54]: Սակայն սրանք վերաբերում են Դերսիմի հարեւանությամբ եղած հայաբնակ խոշոր գյուղերին: Բուն Դերսիմի համար էլ այդ նույնը վկայում է Գեորգ Հալաջյանը՝ «օթախներում նստելու համար, գետնից բարձր սեթեր (հարթակներ - Ա. Պ.) կային, որոնց վրա փռված էր նախ փալասը, վրայից ճեճիմը կամ կարպետը: Դային եւ նահապետական տոհմային տներ, որոնք օթախին սեթերի վրա կարպետի կամ ճեճիմի տեղ փռում էին գորգեր, հատկապես գործված տվյալ օթախի սեթի լայնքին եւ երկայնքին համապատասխան»[55]: Բացի դրան ամենօրյա գործածության սփռոցներից, տոհմային բարեկեցիկ ամեն տուն ուներ գորգերի, կարպետների, ջեջիմների, նախշուն թիկնաբարձերի առանձին պահուստ՝ ծալք[56]:

Ամեն դեպքում, գորգն ընդհանրապես վերնախավային երեւույթ էր, ու դա նկատվում էր նաեւ Դերսիմում: Գ. Հալաջյանը տեղեկացնում է, որ Դերսիմում աղքատներն ու հարուստները զանազանվում էին նրանով, որ եթե տոհմային մեծ ու հարուստ գերդաստանի տան ծալքում «**քսանից- հիսուն գորգ, կարպետ, ճեճիմ, նախշուն բարձ, տասից ավել անկողին եւ վերմակ էր լինում, աղքատն էլ, բացի իր տեղաշորից, իր ուժերին համապատասխան, թեեւ քիչ, բայց ուներ հյուրի տակ փռելու անկողին**»[57]:

51 **Գ. Հալաջյան,** նշվ. աշխ., էջ 170:
52 Տես **Հակոբ Մնձուրի,** էջ 484,
53 **Հակոբ Մնձուրի**, էջ 74:
54 **Հակոբ Մնձուրի**, էջ 384 - 385:
55 **Գ.Հալաջյան,** էջ 215:
56 Անդ, էջ 216:
57 Անդ, էջ 218:

Ամփոփելով գորգի տեխնիկա-տեխնոլոգիական հարցերին ու կենցաղավարմանը վերաբերող քննարկումները, նշենք նաև գորգագործությունը առավելապես զարգացած էր Դերսիմի լեռնային բնակավայրերում, ընդ որում, Գ. Հալաջյանը տեղեկացնում է, որ գորգագործներից զուրկ լեռնային գյուղերում գորգերի ու կարպետների պահանջը լրացնում էին այլ գյուղերի գորգագործներին պատվեր տալու ճանապարհով: Այս դեպքում պատվիրատուն գործողին էր տրամադրում գործվելք գորգին անհրաժեշտ թելերի կրկնակի չափը՝ ավելացած մասը համարելով գործողի աշխատավարձ[58]:

Դերսիմի լեռնային գավառների համար գորգն ու կարպետը նաև առեւտրի ու փոխանակման աղբյուր էին: Նկարագրելով Դերսիմի համեմատաբար հարթավայրային Չարսանջակ գավառի կենտրոն Բերիի հայկական տան կահավորանքը, մասնավորապես այն, որ «գետին փռուած կըլլային կարպետ, ճեճիմ, քիլիմ եւ հազվագիւտօրէն՝ գորգեր», Գեւորգ Երեւանյանը շեշտում է գավառում ոչխարաբուծությամբ շատ քիչ զբաղվելու փաստը, նաև այն, որ գորգերն ու կարպետները բերում էին Դերսիմի լեռնային տարածքներից[59]: Դրան անդրադարձել է նաև Անդրանիկը, տեղեկացնելով, որ այդ գավառի խոշոր բնակավայրերի, մասնավորապես Բերիի ու Բերդակի ուրբաթօրյա տոնավաճառներում Դերսիմի քրդերը վաճառահանում էին «բուրդ, կարպետ, քիլիմ, գորգ, գուլպա եւ այլն..»[60]:

Բնականաբար, գորգագործությամբ զբաղվում էին նաև քրդերը, ընդ որում, եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ նրանց մոտ ավելի գործածական էին կարպետները: Մասնավորապես Անդրանիկի ու Գ. Հալաջյանի նկարագրություններից պարզվում է, որ քուրդ աշիրեթների առաջնորդների ու հարուստների տների մեծ սրահում, որը համարվում էր սրբատուն, օջախ՝ «երեք պատերի տակ փռված էին լինում նախշուն կարպետներ, դրանց վրա՝ ղութնի մինդերներ (փռոց), պատերին կոթնեցված էին կարպետից պատրաստված բարձեր»[61]: Իսկ ընդհանրապես՝ տան հյուրասենյակի պատերի եզերքին, գետնից քիչ բարձր դրվում են թախտեր, որոնք ծածկված են սրբատանը եղածի նման կարպետներով ու մյուս փռոցներով[62]: Ինչպես տեսնում ենք, փռոցների թվում գորգերը չկան:

Անկասկած՝ գորգի ծիսապաշտամունքային նշանակությունը պահպանվել էր նաև քրդերի մոտ, ուր այն արտահայտվում էր հատկապես թաղման ծեսում գորգի[63]; Ընդ որում, ինչպես երեւում է Մնձուրիի նկարագրությունից, հանգուցյալին դնում էին կարմիր **գորգի վրա**, ինչպես որ ընդունված էր հայոց մեջ[64]:

Դերսիմի գորգագործական կենտրոնների մասին: Դերսիմի հայերի ու քրդերի կենցաղում գորգերի ու կարպետների այս բավականին լայն օգտագործումն արդեն իսկ մատնանշում է այդ ոլորտի զարգացած լինելու փաստը: Սակայն սա չի նշանակում, թե այդ զբաղմունքը Դերսիմում տարածված էր ամենուր: Տարածաշրջանի գորգագործական կենտրոնների բացահայտման հարցում կարեւոր տեղեկություններ է հաղորդում Գեւորգ Հալաջյանը: Որոշ ընդհանրացված տվյալներ են հաղորդում նաև Անդրանիկն ու Մնձուրին:

58 Տեմ **Գ.Հալաջյան,** նշվ. աշխ., էջ 168-169:
59 Տեմ **Գ. Երեւանեան,** էջ 10-171:
60 **Անդրանիկ**, էջ 138:
61 **Գ. Հալաջյան,** էջ 204, **Անդրանիկ**, էջ 10:
62 Տեմ **Գ. Հալաջյան,** էջ 205:
63 **Հակոբ Մնձուրի**, էջ 491- 492:
64 Տեմ **Ա. Պողոսյան,** Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ . ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 181-182:

Նկատի ունենալով հատկապես Դերսիմի կենտրոնական լեռնային գավառներում բնակվող քրդական ցեղերի հայկական ակունքներ ունենալու հանգամանքը, որ, ի դեպ, հաստատվում է հենց հայոց բազում սրբատեղիների ավերակների առկայությամբ ու քրդերի համար դրանք սրբավայր հանդիսանալու փաստով, մենք կարևորում ենք Մնձուր լեռան լանջերին ապրող Բախտիարի քրդական ցեղի զորգագործական մշակույթը, որի մասին դարձյալ որպես ականատես վկայում է Հակոբ Մնձուրին՝ «Բախտիարի սարերում, Արտեմ Շեհիրի աղջիկները նստած գործասեղաններու առջև, հյուսելով գորգերը, ինչպես արշալույսը...»[65]:

Խոզաթի շրջան: Գ. Հալաջյանի ներկայացրած տեղեկություններից պարզվում է, որ 1910-ական թվականներին այդտեղ զուտ հայաբնակ գյուղ չէր մնացել, գավառի երեսուն բնակավայրից տասնհինգը միայն քրդաբնակ էր, մյուս տասնհինգը՝ խառը: Սակայն հայերի թիվն այդ գավառում ըստ Հալաջյանի ավելին էր քան քրդերինը՝ 38284 հոգուց 19660-ը հայ էր[66]: Բացի այդ, քրդական բնակավայրերի գերակշիռ մասում պահպանվել էին հայկական եկեղեցիների ավերակներ, գերեզմանոցներ ու այլ սրբատեղիներ, որոնք մեծ հարգանք էին վայելում քրդերի միջավայրում ու վկայում նաև նրանց ծագման հարցում հայկական ակունքներ լինելու հանգամանքը: Բացի դրանից, մի քանի գյուղերում էլ ապրում էին մամգուններին ու միրաքյաններին պատկանող հայեր[67]:

Այս գավառի կենտրոնը **Խոզաթն** էր: ԺԹ. դարի վերջերին այն ուներ մոտ 1500 տուն: Դրանց մեծ մասը պատկանում էր հայերին, որոնք հիմնականում արհեստավորներ էին ու այդտեղ էին տեղափոխվել Ակնից, Արաբկիրից, Խարբերդից ու Չմշկածագից: Այս ամենը վկայող Անդրանիկը նշում է նաև, որ այդտեղ «արտադրում էին բուրդ եւ գորգեր»[68]:

Գ. Հալաջյանի ներկայացրած տեղեկությունների համաձայն գորգագործությունը եւ կարպետագործությունը «**շատ առաջադիմած էր**» **Չմշկածագում**, ուր կար 450 տուն հայ, 150 տուն քուրդ: Հայերը գործում եւ քրդերի հետ փոխանակում էին գորգ, կարպետ, շինում էին պղնձե ամաններ, երկրագործական գործիքներ, նույնպես եւ բրուտագործությանը վերաբերող ամաններ[69]: Այստեղ գորգագործության զարգացած լինելը հաստատում է նաև Համբարձում Գասպարյանը: Նա նշում է, որ տեղի Մեսրոպյան վարժարանում աղջիկների ուսումնական ծրագրում թուրքերենի փոխարեն սովորեցնում էին ձեռագործ: Այդտեղ «կկազմակերպեն գորգագործներու խմբակ մը Սաթենիկ Տ. Գասպարեանի ղեկավարութեամբ, արհեստանոց դարձնելով դպրոցի ներքնայարկի աղջկանց բաժնի մէկ սենեակը»: Ընդ որում, պարզվում է, որ «աղջիկներու երկու տարու ձեռագործով եւ գործած գորգով» նույնիսկ կազմակերպվել է վիճակախաղ[70]: Այդ ամենն անշուշտ վկայում են, որ նշված բնակավայրում կային գորգագործական մշակույթի հաստատուն ավանդույթներ եւ որ այդ ասպարեզում անմասն չէին նաև տեղի հայերը:

Խոզաթի գավառի գորգագործական խոշոր կենտրոն էր **Հավլորի** գյուղը, որն ուներ 60 տուն հայ, 35 տուն քուրդ բնակիչ: Այստեղ, համաձայն Գ. Հալաջյանի հավաքած նյութերի բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր ու գորգի եւ կարպետի գոր-

65 **Հակոբ Մնձուրի**, էջ 497: Հմմտ. **Հ. Համբարձումյան**, Դերսիմ ..., էջ 198:
66 Տես **Գ. Հալաջյան**, էջ 44:
67 Տես **Գ. Հալաջյան**, էջ 33-44:
68 **Անդրանիկ**, էջ 146:
69 Տես **Գ. Հալաջյան**, էջ 34:
70 **Համբարձում Յ. Գասպարեան**, Չմշկածագ եւ իր գիւղերը, էջ 151:

ծումը, իսկ մետաղամշակությունը, վառոդի պատրաստումը, քարտաշությունը, հյուսնությունը, դարբնությունը միայն հայերի արհեստներն էին[71]: Ի դեպ, հարկ ենք համարում շեշտել, որ Դերսիմում ընդհանրապես արհեստներով զբաղվում էին բացառապես հայերը:

Այս գավառում գորգագործությունը համատարած էր գուր քրդաբնակ **Ղլիբպա** գյուղում, ուր գրեթե ամեն տուն գորգագործ ու կերպասագործ էր: Շատ հարգի էին այս գյուղում գործված թաթպաններն ու ձեռնոցները, որոնք գործվում էին այծի մազից[72]:

Դերսիմի հայերի ու քրդացած հայերի զբաղմունքների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Անդրանիկը: Ըստ այդմ Միրաքյան հայերի հիմնական զբաղմունքներից մեկն էր հենց ոստայնանկությունը, այդ թվում գորգագործությունը, նրանք «ամբողջ ձմեռ կաշխատին բրդի մեկ մասը զգել, մանել ու ներկել գորգեր, կարպետներ, քիլիմներ, գուլպաներ գործել», որոնց ավելցուկը գղամարդիկ տանում ու իրենց անհրաժեշտ մթերքների հետ փոխանակում էին Չարսանջակի, Քղիի, Բալուի, մինչև իսկ Խարբերդի գյուղերում[73]:

Օվահգի շրջան: Այս գավառը ԺԹ. դ. վերջերին, ըստ Անդրանիկի դիտարկումների ուներ 35-40 գյուղ: Այն զբաղեցնում է Դերսիմի արևմտյան մասը, ամբողջովին բնակեցված էր միշտ կառավարության հանդեպ ապստամբ եղած դգլբաշ քրդական ցեղերով[74]: Ընդ որում ցեղապետներից մեկն էլ Տիապ բեկն էր, որի մասին իր ստեղծագործություններից մեկում հիշատակել է Հակոբ Մնձուրին[75]: Այստեղ, գորգագործության կենտրոն էր **Աշուրեկ** գյուղը, որի 160 տուն բնակչությունից 45-ը հայեր էին: Վերջիններս պահել էին իրենց բարբառն ու տոնում էին քրդերի հետ միասին հայոց ավանդական բոլոր տոները: Գ. Հալաջյանի դիտարկումների համաձայն «հայերն ու քրդերը լավ գորգագործներ ու կարպետագործներ էին»[76]: Այդ նույնը վերաբերում է նաև **Տանձիկ** գյուղին որի 200 տնից 120-ը միրաքյան հայերինն էր: Գյուղն ընդհանրապես արհեստների կենտրոն էր ու մասնավորապես զարգացած էին նաև գորգագործությունն ու կարպետգործությունը[77]: Ի դեպ այս գյուղի քրդերը պատկանում էին Քեչալան ցեղախմբին, որը նույնպես ուներ հայկական ծագում[78]:

Այս գավառի **Դարսի** գյուղում, որը բացառապես քրդաբնակ էր, կային բազմաթիվ տնայնագործներ, որոնք գործում էին գորգ, կարպետ, փալաս, խուրջին, պարան եւ փոխանակում էին զազանգան պիտույքների հետ[79]: Նույն իրավիճակն էր նաև հայերով ու քրդերով բնակեցված Ջիարեթ արհեստաշատ գյուղում, ընդ որում, արհեստներով զբաղվում էին միայն հայերը:

Ակնա շրջան: Ակնա գավառի արեւելյան մասում տեղաբաշխված բնակավայրերը, որոնք նույնպես մտնում են Դերսիմի պատմամշակութային տարածքի մեջ, հիմնականում բնակեցված են քրդացած հայերով ու զազաներով: Ակնա շրջանի այս մասում կար 21 գյուղ է, որից 19-ը քրդաբնակ էր, երկուսը հայ ու քուրդ: Զուտ հայաբնակ գյուղ չէր մնացել[80]:

---

71 Տես **Գ. Հալաջյան,** էջ 41:
72 Տես անդ, էջ 37:
73 Տես **Անդրանիկ,** էջ 181:
74 Տես **Անդրանիկ,** էջ 147:
75 Տես **Հակոբ Մնձուրի,** էջ 491- 493:
76 **Գ.Հալաջյան,** էջ 45-46:
77 Տես **Գ.Հալաջյան,** էջ 54:
78 Տես http://www.dnforum.am/showthread.php:
79 Տես **Գ.Հալաջյան,** էջ 55:
80 Տես **Գ.Հալաջյան,** էջ 61:

Քրդաբնակ լինելու առնչությամբ բավական է հիշատակել այն հանգամանքը, որ այդ բնակավայրերի մի մասը պատկանում էր Մամգուն հայկական ծագումով աշիրեթին:

Դերսիմի հյուսիսարմտյան մասերի բնակավայրերի վերաբերյալ, մասնավորապես Ղուռուչայ գավառի մասին կարեւոր են Հակոբ Մնձուրիի դիտարկումները՝ ըստ որի դա Ակնա ու Կամախի միջեւ ընկած տարածքն է, ուր կար 66 գյուղ, որոնցից ամենամեծը Արմտանն է, որտեղից էլ հենց ինքն էր՝ Մնձուրին (Հակոբ Դեմիրճյանը): Նա թվարկում է նաեւ 1910-1914 թվականներին դեռեւս հայաբնակ մնացած գյուղերը՝ Արմտան (մեծ ու փոքր), Թեղուտ, Թորդան, Հասանովա, Խառնավոլ[81]:

Գեւորգ Հալաջյանը քրդաբնակ գյուղերից մեկի՝ **Միլվանի** նկարագրությունը ներկայացնելով շեշտում է, որ «ամենալավագույն կապերտները, գոգնոցները, գոտիները, բարձերը այս շրջանների մեջ գործում են այս գյուղում[82]: Այստեղ էին նաեւ Գասմա, Բենկա, Զմարա հայկական խոշոր գյուղերը, որոնց կենցաղին ու զբաղմունքներին վերաբերող պատկերներ կան Հակոբ Մնձուրիի ստեղծագործություններում: Մեր ձեռքի տակ դեռեւս չկան որոշակի կենտրոնների վերաբերող այլ տեղեկություններ, սակայն դատելով Մնձուրիի կողմից այդ բնակավայրերի կենցաղի ու բնակարանների ներքնատեսքի նկարագրություններից, կարելի է եզրակացնել որ այդ ու դրան մերձակա Ղուռուչայ գավառի հայկական ու քրդական գյուղերում բավականաչափ պահպանվել էին գորգագործական ու կարպետագործական հնամենի ավանդույթները[83]:

Բոլոմորի շրջան: Այս շրջանը համապատասխանում է Դերջանին՝ Դերսիմի հյուսիս արեւելյան՝ հարթավայրային մասին: Այստեղ գորգագործությամբ աչքի էր ընկնում **Պարտի** քրդաբնակ գյուղը: Հալաջյանն այդ առիթով շեշտել է, որ «կանանց մեջ շատ զարգացած է կարպետագործությունը եւ գորգագործությունը: Այս գյուղի գորգերի ներկը, ծաղիկների եւ զարդանկարների գեղարվեստական ճաշակը, որակը եւ նրբությունը կարող էր մրցել ամենաընտիր գորգերի տեսակների հետ, անկողինների տակի փռոցները, հյուրերի հատուկ բարձերը, եւ բոլորն էլ գեղազարդ կապերտներ էին: Գործում էին նաեւ շուրջ երեք սմ լայնքով ու 4-5 մ երկայնքով ծոպավոր գոտիներ, կանանց բրդե գոգնոցների վրայից կապելու համար: Դրանց ծաղիկների գեղեցկությունը նրբաճաշակ ձեռագործի տպավորություն էր տալիս, կարծես թե ասեղով աշխատած լինեին քեկեֆի վրա (քարգահ՝ ասեղնագործելու շրջանակ-**Ա. Պ**), մինչդեռ գործված էին քելքիթով (ատամնավոր երկաթից մի ծանր գործիք), որ հյուսքը խտացնելուն էր ծառայում[84]:

Բոլոմոր գավառի բնակավայրերից **Ներտիֆը**՝ Դերսիմի արեւելյան շրջանի ամենամեծ գյուղը բնակեցված էր Միրաքյան հայերով եւ ուներ 380 տուն: Այդտեղ կային լավ արհեստավորներ՝ հյուսն, դարբին, գինագործ, վառոդագործ, կապար ձուլող, երկրագործական գործիքներ պատրաստող[85]: Բոլորը բնիկներ են՝ «Թոռան թոռը Միրաքյան տան»: Միրաքյան հայերով էր բնակեցված նաեւ այդ գավառի Խոզնգեղ գյուղը[86]: Այդ երկուսում էլ զարգացած էին գորգագործությունն ու կարպետագործությունը, որ, ինչպես արդեն նշել

81 Տես **Հակոբ Մնձուրի,** էջ 522:
82 Տես **Գ.Հալաջյան,** էջ 60:
83 Տես **Հակոբ Մնձուրի,** էջ 31, 53, 74, 281, 245:
84 Տես **Գ.Հալաջյան**, էջ 66:
85 Տես անդ, էջ 69-70:
86 Տես անդ, էջ 73:

ենք, միրաքյաններին բնորոշ զբաղմունքներից էր: **Գեորգ Ղալաջյանի** տեղեկություններից պարզվում է նաև, որ միրաքյան հայերով էր բնակեցված այս գավառի կարպետագործության առաջնակարգ կենտրոն **Քաջարան** գյուղը, ուր կար 195 տուն հայ միրագ, 65 տուն ալեւի քուրդ[87]:

Անշուշտ, այս շուրջ տասը բնակավայրերը չէին միայն, որ հայտնի էին որպես գորգագործության ու կարպետագործության կենտրոններ, ուղղակի մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում միայն դրանց վերաբերյալ էին որոշակի տեղեկությունները[88]: Անկասկած, այդպիսին էին լեռնային Դերսիմի բնակավայրերի մեծ մասը, մանավանդ, որ դրանցից շատերում մեծ տեղ էին գրավում բրդի մշակումն ու տնայնագործական զբաղմունքները, որոնց թվում ենթադրվում են նաև գորգագործությունն ու կարպետագործությունը: Այսպիսով, տարբեր սկզբնաղբյուրների վկայությունները մատնանշում են, որ Դերսիմի հայերի ու քրդերի զբաղմունքներում մեծ տեղ ու նշանակություն ուներ գորգագործությունը, եւ դա այնքան նշանակալից էր, որ չէր վրիպել ուղեգիրների ուշադրությունից:

Դերսիմի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի ու կարպետների տիպերի մասին: Դերսիմի գորգագործական կենտրոնների մասին մեր ունեցած տեղեկություններն ինչքան էլ որ բազմաբնույթ են ու վկայում են այդ զբաղմունքի լայն տարածման ու զարգացած լինելու փաստը, այդուհանդերձ բավարար չեն տարածաշրջանին բնորոշ խնդրո առարկա գործվածքեղենի գեղազարդման համակարգի, տեխնոլոգիական ու գունային առանձնահատկությունների բացահայտման համար: Մինչդեռ հենց այդ գործոններն են անհրաժեշտ տարածաշրջանին բնորոշ գորգերի բացահայտման ու դրա տիպաբանման համար:

Դերսիմի առումով դժվարությունն այն է, որ տարածաշրջանի քրդական ցեղերից շատերը այդտեղ են տեղափոխվել Աղձնիքից, Վասպուրականի հարավարեւելյան գավառներից եւ Ուրմիա լճի ավազանի գորգագործության ավանդույթներով հայտնի տարածաշրջաններից, եւ անշուշտ, իրենց հերթին Դերսիմ են բերել այդ կենտրոններին բնորոշ գորգերի գեղազարդման ավանդույթները: Սակայն մեզ հայտնի է նաև, որ այդ ավանդույթները չէին կարող բացառապես քրդական լինել՝ այդ գորգագործական կենտրոններում գորգագործությամբ զբաղվել են նաև այդտեղ բնակված պարսիկները, հայերն ու մի շարք այլ քրդա-թուրքմենական ծագումով քոչվորական կամ կիսաքոչվորական ցեղեր՝ բախտիարները, շահսեւանները, ավշարները, թարաքամաները եւ այլն: Ընդ որում, գորգագործական մի շարք կենտրոններում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունները մեծապես ազդել են տվյալ կենտրոնի մշակութային հետագա զարգացումներին, եւ դա հատկանշական նաև Ուրմիա լճի հարավարեւմտյան գորգագործական կենտրոնների համար, որոնք ուսումնասիրողներից շատերը համարում են քրդական[89]: Այդտեղ զգալի թիվ էին կազմում նաև հայերը, որոնք ավանդաբար զբաղվում էին գորգագործությամբ: Սակայն, երբ Ի. դա-

87 Տե՛ս **Գ. Ղալաջյան,** էջ 66-67:

88 Ի դեպ, Պատմական Հայաստանի մյուս գորգագործական կենտրոններից ոչ մեկի վերաբերյալ չկան այսպիսի մանրամասն ու հստակ տեղեկություններ:

89 Քրդական գորգերի մասին տե՛ս **Michael Wendorf**, Kurdish Rugs and Related Weavings - an 8000 Year Weaving Tradition.- http://turkotek.com/salon_00088/salon.html?; http://www.turkotek.com/misc_00053/blindness.htm*Posted by R. John Howe on 08-23-2006 10:10 PM, An introduction to* Kurdish Rugs and other Weavings, vol. IX, No. 2 December/ January, 1989, Book Review by Murray L. Eiland, http://www.rugreview.com/orr/9-2-42.htm:

ի առաջին քառորդում ու նաև 1946-1949 թվականներին կատարված արտագաղթերի արդյունքում այդ գորգագործական կենտրոնները հայաթափվեցին[90], ակնհայտորեն նկատվեց, որ Ի. դարի կեսերին այդ տարածքներում ստեղծված գորգերի կատարման որակն ու գեղազարդման ճաշակը նախորդ ժամանակներում գործվածներից անհամեմատ ցածր են[91]: Մենք ենթադրում ենք, որ վաղ շրջանում գործված գորգերի որակական բարձր հատկանիշներով օժտված լինելու հարցում կարևոր դերակատարում են ունեցել տեղի հայերը: Այս հանգամանքը նկատի առնելով, մենք Դերսիմում հաստատված եկվոր քրդական ցեղերի գորգագործական ավանդույթներում նույնպես տեսնում ենք հայոց ազդեցության ներկայությունը:

Հիմնականում այդքան են Արևմտյան Հայաստանի՝ այդ թվում նաև Դերսիմի գորգագործական մշակույթի մասին եղած պատկերացումները: Սակայն անկախ դրանից, կային գորգերի տիպեր, որոնք տարածում էին ունեցել գորգագործական բոլոր կենտրոններում, ըստ այդմ՝ նաև Դերսիմում: Դրանց թվում էին «**Նշանախշով**», «**Գլաձոր**»[92], «**Խաչազարդով**», «**Ասպղազարդով**», «**Ծաղկանախշով**» տիպերին ու «**Գունաշերտային**» եւ «**Թեմատիկ-պատկերային**» խմբերին պատկանող գորգերը, որոնք տարբերակվում էին միայն տեղական տեխնոլոգիական ու գեղազարդման առանձնահատկություններով: Բնականաբար, այստեղ տարածում են ունեցել նաև այնպիսի տիպեր, որոնք բնորոշ էին հիմնականում տեղի գորգագործական կենտրոններին ու իրենց տարբերակներով նաև մերձակա կենտրոններին: Այդպիսիք բացահայտելու հարցում մենք կարևորել ենք հենց Դերսիմին վերագրվող նմուշներ, որոնք հնարավորություն են տվել մեզ ստորև, ըստ համապատասխան խմբերի, ներկայացնել տեղի գորգագործական կենտրոններին բնորոշ մի շարք տիպեր:

1. «Շեղանկյունագարդով» գորգերի խումբ: Այս խմբում ընդգրկված գորգերի գեղազարդման համակարգի հիմնական տարրը շեղանկյունագարդն է՝ շեղանկյունատիպ, իրար մեջ ամփոփված, կեռիկներով կամ աղոցատիպ ատամներով երիզված շրջանակներից կազմված մի բարդ հորինվածք, որն ընդհանուր առմամբ ունի համահայաստանյան տարածում: Տիպաբանման առումով դրանք բնորոշվում են մատուցման ու այլ զարդերի ու մանրամասների հետ համադրման առանձնահատկություններով: Դերսիմի գորգագործական կենտրոններին բնորոշ վաղ ավանդույթների ու ընդհանրապես այս խմբին պատկանող գորգերի պատմության մասին պատկերացում կազմելու համար մեծ կարևորություն ունի Տիվրիկին մերձակա ժայռափոր եկեղեցիներից մեկում խորհրդավոր ընթրիքը պատկերող մի որմնանկար, որում կան նաև գորգապատկերներ (պատկեր 1)[93]: Դրանցից մեկի՝ սեղանի տակ փռվածի գեղազարդման հիմնական տարրը շեղանկյունագարդն է, որը ծածկում է ամբողջ գորգադաշտն ու ներկայացված է կանոնավոր շարքերով: Մյուսի՝ սեղանի վրա փռվածի վրա էլ բավականին հստակորեն ընդգծված են նաև գորգադաշտն ու եզրագոտի-

90 Տե՛ս **Ե. Ֆրանգեան**, Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 7: Այս առումով հայտնի է նաև 1920 -30-ական թվականներին Աղրբեջանի մի շարք գորգագործական կենտրոններում ստեղծված իրավիճակը: Վիճակագրական ուսումնասիրություններից պարզվել էր, որ 1918-20 թվականներին իրականացված հայաթափումից հետո դադարել էին գոյություն ունենալ մինչ այդ հանրահայտ Շամախիի, Գյոկչայի, Աղդաշի, Նուխիի ու Զաքաթալայի գորգագործական կենտրոնները. տե՛ս **Թ. Ծ. ՂՑՊՈՊՏՉ**, ԻՈՍՈՉՍՈՉՖԿ.- ԼՈՅՏՐՈՍՏ-ՖՍՏՎՏՎՈՓԿՐՍՈՈ ՏՓԿՐՍ. ԿՏՊ Տոքպո ՐԿՊՈՍՓՈԿՊ Ծ. կ. կՈՉՍՏՉՈՓՈ, Ծ.-Խ., 1926, էջ 140:

91 Տե՛ս http://www.turkotek.com/misc_00053/blindness.htm:

92 Ուսումնասիրողներին հայտնի է նաև «**Ֆերահան**», «**Սեննեհ**», «**Ղերաթ**» եւ այլ անվանումներով:

93 Տե՛ս http://www.cappadociaguideonline.com/goreme.htm:

ները[94]: Այս գորգապատկերների կարեւորությունը խնդրո առարկայի առումով այն է, որ դրանք թվագրվում են Թ-Ժ. դդ., կապարվել են պավլիկյան աղանդավորականներով բնակեցված տարածքում, ուստի եւ վկայություն են Կապադովկիայի ու Ներքին Հայքի հայոց բնորոշ գորգերի ու դրանց գեղազարդման մանրամասների մասին: Համենայնդեպս դրա վկայությունն է շեղանկյունազարդի մատուցման այդ նույն ավանդույթների լայն տարածում ունենալը պատմական Հայաստանի ու հարակից տարածաշրջանների գորգագործական կենտրոններում: Դրանք հատկապես լայնորեն օգտագործվել են խուրջինների գեղազարդման դեպքում (պատկեր - 2)[95]: Ուսումնասիրողներից ոմանք այդ հորինվածքը համարում են քրդական երեւույթ ու շեղանկյունազարդի այս տարբերակով գեղազարդված գորգերի ծագումը կապում են Աղձնիքի ու հյուսիսային Միջագետքի քրդական գորգագործական կենտրոնների հետ[96]: Մենք չենք վիճարկում հենց այս նմուշի ծագումնաբանության հարցը եւ ոչ էլ քրդական գորգագործական կենտրոններում դրա տարածում ունենալը, սակայն կրկին անգամ հարկ ենք համարում մատնանշել դրա համահայաստանյան տարածում ունենալու փաստը: Ընդ որում՝ շեղանկյունազարդի մատուցման այս սկզբունքը հայոց մեջ հիմնականում դիտարկվում է խուրջինների, անկողնապարկերի ու կարպետների ասպարեզում:

ԺԹ-Ի. դդ. վերաբերող այս խմբի գորգերի գեղազարդման համակարգում շեղանկյունազարդը առավելապես ներկայացվում է մեկ կամ մի քանի շարքով, իսկ գորգադաշտի ազատ մնացած տարածքները, որպես կանոն, գեղազարդվում են մանր վարդակներով, կոիկներով երիզված շեղանկյունազարդերով, կենդանակերպ ու մարդկային պատկերների ոճավորումներով, կնոջ պահպանակաձեւ կախիկ-զարդերի պատկերներով, խաչազարդերով եւ այլ մանրամասներով (պատկեր 3)[97]: Այն առավել արտահայտիչ է ներկայացված մեր տիպաբանությամբ «**Բագրեւանդ**» անունով տարբերակված տիպի գորգերի գեղազարդման համակարգում, որտեղ դրանք սովորաբար պատկերվում են մեկ երկայնակի շարքով[98]: Մարաշի ու Այնթապի, ինչպես նաեւ Խարբերդի ու Սղերդի գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեն շեղանկյունազարդ խոշոր հորինվածքների մեկ կամ երկու շարքով գեղազարդված գորգերը, որոնք ամենայն հավանականությամբ, պետք է հայտնի լինեին նաեւ Դերսիմի գորգագործական կենտրոններում (պատկեր 4)[99]:

Այս խմբին պատկանող, Դերսիմում գործված ու տեղական առանձնահատկությունների արտահայտման առումով ուշագրավ մի գորգ էլ պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում : Այն Մայր Աթոռի նոր ձեռքբերումներից է եւ մեր կազմած տիպաբանության համաձայն պատկանում է «**Գլաձոր**» տիպին: Մինչ թանգարան մուտք գործելն այն պահվում էր որպես տոհմային ժառանգություն ու հայտնի է, որ այն գործել են Դերսիմի արեւելյան գավառներում՝ Դերջանում, 1890-ական թվականներին: Այս տիպի բնորոշիչ մանր

94 Նկատի ունենալով 1021-22 թթ. այդտեղից Սեբաստիա ու Կեսարիա կատարված հայոց տեղաշարժը՝ այս որմնանկարի ավանդույթները որոշ ուսումնասիրողներ կապում են Վասպուրականի հետ, այս մասին տե՛ս **Ն. Ղակորյան,** Մի քանի ընդհանրություններ Վասպուրականի մանրանկարչության եւ Կապադովկիայի որմնանկարների միջեւ. ԲՄ, 12, Երեւան,1977, էջ 59, նկ. 2:

95 Տե՛ս http://www.rugreview.com/95jaf.htm:

96 Տե՛ս անդ:

97 Տե՛ս http://www.rugspecialist.com:

98 Տե՛ս **Ա. Պողոսյան,** Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին եւ 20-րդ դ. սկզբին. Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, Երեւան, 2009, էջ 171-172:

99 Տե՛ս http://www.rugspecialist.com:

վարդակներով լրացված շեղանկյունագարդի շարքերը այլ գորգագործական կենտրոններում սովորաբար ընդմիջված են լինում բազմաթերթ վարդակների շարքերով: Դերջանում գործված գորգում, վարդակների փոխարեն ներկայացված են կիսավարդակներ, եւ կարծում ենք, որ հենց դա տեղական առանձնահատկությունների դրսեւորում է:

2. «Բազմանիստ խոշոր հորինվածքով» խմբի գորգեր: Դերսիմի գորգագործական կենտրոնների առումով մեր ունեցած տվյալները ավելի շատ վերաբերում են այս խմբին պատկանող գորգերին: Ըստ այդմ, քրդաբնակ մի շարք տարածքների՝ Սոյուղ- Բուլաղի, Հաքարիի, Աղձնիքի հարավարեւմտյան, Մարաշի եւ Այնթապի մերձակա գավառների գորգագործական կենտրոններին բնորոշ են եղել Կովկասյան ու Փոքրասիական գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեցած բազմանիստ, մասնավորապես ութանիստ երկրաչափական զարդաշրջանակներ՝ կեռիկազարդ, ասպիճանաեզր կամ սղոցատիպ եզրով եւ դրանցով գեղազարդված գորգերը: Դրանց թվում են մասնագետների կողմից **«Մեմլինգ», «Փառակա», «Տավուշ»** անվանումներով տարբերակված տիպերին պատկանողները, որոնց տարբերակներն էլ հենց լայնորեն հայտնի են նաեւ քրդական վերոհիշյալ գորգագործական կենտրոններում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես Դերսիմի եկվոր քրդական ցեղերը, այնպես էլ տեղում եղած ու նաեւ քրդացած Մամգուն եւ Միրաքյան հայերը դարերի ընթացքում կապարել են բազում տեղաշարժեր, գտնում ենք, որ վերոհիշյալ հորինվածքով գորգեր գործել են նաեւ Դերսիմի գորգագործական կենտրոններում (պատկեր 5, 6)[100]: Այս առումով կարեւոր փաստ է ԺԸ. դ. վերջով թվագրված կապադովկիական գորգի մի հատված, որն ունի փոքրասիական գորգերին բնորոշ գունային երանգներ ու գեղազարդման հիմնական տարրը հենց **«Մեմլինգին»** բնորոշ հորինվածքն է (պատկեր 7)[101]: Մենք սա նույնպես համարում ենք պատմական Դերսիմի վաղ հայկական գորգագործական մշակույթը ներկայացնող մի նմուշ, ինչպիսին որ վերը հիշատակված որմնանկարի գորգապատկերն էր: Ընդհանրապես փոքրասիական ու կովկասյան գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեցած եւ տարբերակային բազմազանությամբ աչքի ընկնող գորգի այս տիպը կարիք ունի առանձին ուսումնասիրության: Դրա վերաբերյալ եղած տեղեկություններն ու պահպանված վաղ նմուշները հնարավորություն են տալիս ենթադրել, որ այն առավելապես բնորոշ է եղել պատմական Հայաստանի արեւմտյան նահանգների գորգագործական կենտրոններին:

Հրապարակված ու մեզ հայտնի գորգերից որոշակիորեն Դերսիմին է վերագրված բազմանիստ հորինվածքով բնորոշվող ու **«Կավակ» անվանումով տարբերակված** մի գորգ (պատկեր 8)[102]: Ներկայացնողների համոզմամբ, այն գործել են ԺԸ. դարի վերջին ու ԺԹ. դ. սկզբին եւ բացի Դերսիմից, բնորոշ է նաեւ մերձակա՝ մասնավորապես արեւելյան Անատոլիայի գորգագործական կենտրոններին: Այս գորգի գեղազարդման հիմնական տարրերը նույնպես էականորեն տարբերվում են քրդական գորգագործական մյուս կենտրոններին վերաբերող նմուշներից: Ընդ որում դրա ու վերոհիշյալ կայքում ներկայացված այդ տիպի մյուս

100 Տե՛ս http://www.jozan.net/Gallery/Detail.asp?Item=86316:

101 Տե՛ս http://www.rugspecialist.com:

102 Տե՛ս **Jim Allen, A Rare Anatolian Border.-** http://www.turkotek.com/misc_00089/bordeer.htm

Posted by on 03-04-2008 01:06 PM, պատկեր 3:

գորգերի գեղազարդման համակարգում նկատելի է նաև արևելահայաստանյան գորգերին բնորոշ տարրերի առկայությունը: Ավելի որոշակի՝ **«Գինու բաժակ», «Օձագալար», «Ասպղազարդով»** եզրագոտիներն ու գորգադաշտի գեղազարդման մի շարք այլ մանրամասներ բնորոշ են Արցախ-սյունիքյան ավանդույթներին[103]: Մեր տեսակետի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այս գորգի տարրերակները բնորոշ են հիմնականում Փոքր Ասիայի հայկական գաղթօջախների գորգագործական այն կենտրոններին, որոնցում առկա էին Արցախից, Սյունիքից ու Արևելյան Հայաստանի այլ տարածաշրջաններից այդտեղ տեղափոխված հայերը: Դրանց թվում է նաև Սպարտան, որի մերձակայքում է գտնվում Կավակ բնակավայրը:

3. «Մեկ ընդհանուր զարդաշրջանակում ամփոփված հորինվածքներով» խմբի գորգեր**:** Այս խմբին պատկանող տիպերից մեկի վերաբերյալ եղած տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ այն բնորոշ էր նաև Դերսիմին: Խոսքը վերաբերում է հանրահայտ **«Վահան»** տիպին, որի տարբերակները լայն տարածում ունեին Արևմտյան Հայաստանի հյուսիսարևելյան գավառների գորգագործական կենտրոններում, այդ թվում՝ Բասեն-Բագրեւանդը, Վանանդը եւ նմանատիպ ժողովրդագրական նկարագիր ունեցող Դերսիմը: **«Վահան»** գորգի խնդրո առարկա տարբերակը բնորոշվում է նրանով, որ ի տարբերություն Սեւանի ավազանի գորգագործական կենտրոններին բնորոշ դասական տիպի, այդտեղ ներկայացվում է ոչ թե մեկ, այլ մի քանի հորինվածք: Առանձնահատկություններ կան նաև գեղազարդման մանրամասների ու մանավանդ՝ գունային լուծումների ոլորտներում (պատկեր 9):

Տարածաշրջանին վերաբերող գորգերի այլ տիպերի մասին բավարար պատկերացում ընձեռող նյութերի ծայրահեղ սակավության պատճառով, առայժմ հարմար ենք գտնում սահմանափակվել այսքանով:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Դերսիմի հայոց գորգագործական կենտրոնները ձեւավորվել են դարեր շարունակված ժողովրդագրական բազմաբնույթ գործընթացների պայմաններում, որոնց արդյունքում այդտեղ ապրիճանաբար արմատավորվել էին հայոց գորգագործական այլ կենտրոններին, ինչպես նաև էթնիկական այլ հանրույթներին բնորոշ ավանդույթներ: Իր հերթին, Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի վաղ ավանդույթները պատմական ճակատագրի բերումով հսկայական ազդեցություն են թողել տեղի ու մերձակա տարածքներում բնակություն հաստատած էթնիկական հանրույթների գորգագործական ավանդույթների ձեւավորման գործընթացների վրա: Ամփոփելով ասվածը՝ հարկ ենք համարում նաև նշել, որ հայոց գորգագործական մշակույթի այս հնամենի ու ծայրահեղ բարդ ժողովրդագրական պատմություն ու նկարագիր ունեցող կենտրոնի գորգագործական մշակույթի ամբողջական պատկերի լուսաբանումը կարիք ունի ծավալուն եւ ամբողջական ուսումնասիրության:

---

103 Տե՛ս http://www.turkotek.com/misc_00089/bordeer.htmPosted by on 03-04-2008 01:06 PM, պատկեր 1, 2, 4, 5: